

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՐԱՆՏԻ

ՀՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՍԱՆՅԱՆ  
ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ  
1914-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է.00.02-«Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ Խաչատուր Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ պատմական գիտությունների դոկտոր  
Ա. Գ. Ավագյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՂԻՍԱԽՈՄՆԵՐ՝  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ա. Ջ. Կիրակոսյան  
պատմական գիտությունների թեկնածու  
Բ. Պ. Պողոսյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հունիսի 6-ին, ժամը 13.00–ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյանի պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հունիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու  
Ռ. Պ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:* Բալկանյան պատերազմների վերջին շրջանից սկսած մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը երիտթուրքական վարչակարգը հարկադիր բռնագաղթի ենթարկեց Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի հույն բնակչության զգալի մասին՝ այդ ընթացքում կոտորելով նրանց: Քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց նաև 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին, երբ տեղահանվեց, արտաքսվեց և կոտորվեց Փոքր Ասիայի գրեթե ողջ հույն բնակչությունը:

Օսմանյան կայսրությունում հույների նկատմամբ տարվող քաղաքականությունը կայսրության քրիստոնյա տարրի նվազեցման, մահմեդականացման և հետագա թուրքացման նպատակով ընդհանուր քաղաքականության մի մասն էր: Այսօր հայ պատմագրության կարևոր խնդիրներից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում լուրջ փաստարկներ չի հայտ բերելև ու գիտական շրջանառության մեջ դնելև է: Այդ համատեքստում մեծ կարևորություն է ստանում նաև Օսմանյան կայսրությունում քրիստոնյա մյուս փոքրամասնությունների տեղահանությունների և կոտորածների լուսաբանումը որպես ընդհանուր, պետական քաղաքականության բաղկացուցիչ: Մյուս կողմից հունական կոտորածների վերլուծությունը լուսաբանում է թուրքացման գաղափարախոսության հիմնադրումն ու իրականացումը և թույլ է տալիս ավելի լավ պատկերացում կազմել հանրապետական Թուրքիայի էության և հիմնադրման պատմության մասին: Հակահունական քաղաքականության ուսումնասիրումը նաև հունական աղբյուրների օգտագործմամբ կօգնի թուրքական ժխտողականության դեմ պայքարին:

*ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:* Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Օսմանյան կայսրությունում հույների դրությունն ու բնակչության շրջանները, թուրքական իշխանությունների կողմից հույն ժողովրդի նկատմամբ տարվող տեղահանությունների և կոտորածների հետևողական քաղաքականությունը՝ մամուլում և կրկնություն տեսնելով հայ ժողովրդի նկատմամբ վարած քաղաքականության հետ: Այդ նպատակով առաջադրել ենք հետազոտական հետևյալ խնդիրները.

1. Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և գիտական գրականության հիման վրա ներկայացնել հույների տեղաբաշխման պատկերն Օսմանյան կայսրությունում՝ հիմնահարցն ամբողջական և ընդգրկուն դարձնելու նպատակով:
2. Լուսաբանել 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հույների առանձին կոտորածների դեպքերը, ինչպես նաև նույն ժամանակաշրջանում հունական ազգային-ազատագրական շարժումը:
3. Դիտարկել 20-րդ դարի սկզբին՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո հույների իրավական դրության մեջ կատարված փոփոխությունները, և նրանց առաջին տեղահանությունները 1913-1914 թթ.:

4. Ուսումնասիրել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հույների զանգվածային տեղահանություններն ու կոտորածները:

5. Ներկայացնել 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին Պոնտոսում և Զմյուռնիայում հույների ջարդերը և դրանք պայմանավորող համագամանքները:

6. Հետազոտել դիտարկվող ժամանակահատվածում հայ և հույն ժողովուրդների համագործակցության դրսևորումները, ինչպես նաև փորձել վերլուծել Հայոց ցեղասպանության և հույների զանգվածային կոտորածների նմանություններն ու տարբերությունները:

7. Ներկայացնել «Հունական հարցի» քննարկումները Լոզանի կոնֆերանսում, ինչպես նաև ստորագրված «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագրի» էությունը և հետևանքները հույն ժողովրդի համար:

*ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:* Ատենախոսության թեման՝ «Հունական բնակչությունն Օսմանյան կայսրությունում և հույների կոտորածները 1914-1923 թվականներին», ընդհանուր առմամբ, դեռևս չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա հայ պատմագրության մեջ, թեև ցեղասպանությանը վերաբերող գրականության մեջ շատ է անդրադարձ կատարվել հույների նկատմամբ կիրառված համանման քաղաքականությանը, հատկապես 1914 թ. Էգեյան ծովափին ծավալված իրադարձություններին: Օտարագրի հեղինակների կողմից հարցը քննարկվել է առանձին մենագրությունների, հոդվածների, հուշագրությունների և մատենագիտական բնույթի աշխատանքների ձևով՝ հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով Պոնտոսի կամ միայն Զմյուռնիայի ջարդերին:

Ներկա աշխատանքում փորձ է կատարվում հունական, հայկական, թուրքական, ռուսական, եվրոպական և ամերիկյան աղբյուրների ու այլ գիտական գրականության լայն օգտագործմամբ համակողմանիորեն ուսումնասիրել և վերլուծել հույն ժողովրդի կոտորածները: Ատենախոսությունում մի շարք փաստեր առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Ուսումնասիրության մեջ լայն անդրադարձ է կատարվում 1914-1923 թթ. հայ-հունական հարաբերությունների համալիր լուսաբանմանը:

*ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:*

Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է 20-րդ դարի առաջին քառորդը: Մինևույն ժամանակ աշխատանքի մեջ հիշատակվող որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են ժամանակագրական այդ շրջանակներից, ինչը պայմանավորված է քննության առարկա հարցն առավել խորությամբ հետազոտելու նպատակով: Այսպես, օրինակ, հույն բնակչության մասին համապարփակ պատկերացում կազմելու և նրա նվազեցման միտումը ներկայացնելու նպատակով բերվում են թվային տվյալներ 19-րդ դարի վերջից:

*ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ:* Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են ներկայացվող հարցադրումներին և տեսակետներին համալիր մոտեցման, դրանց գիտական քննական վերլուծության սկզբունքները: Այս ամենն ապահովում է պատմական դեպքերի առավել ամբողջական և հավաստի գնահատումը, քանի որ թեմային առնչվող գրականության մեջ քիչ չեն իրարամերժ և հակասական մոտեցումները:

Կապված թեմայի նպատակների և խնդիրների հետ՝ հատուկ ուշադրության է արժանացել նաև փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

*ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:* Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել ինչպես Առաջին համաշխարհային, այնպես էլ 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմների տարիներին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների՝ տվյալ դեպքում հույների նկատմամբ վարած քաղաքականության մասին պատկերացում կազմելու համար: Աշխատության դրույթները կարող են կիրառվել նաև հայ-հունական հարաբերություններին միևրկամ աշխատություններում և որպես փաստարկ՝ Օսմանյան Թուրքիայում քրիստոնյա տարրի ոչնչացումը ժխտող քաղաքականության դեմ: *ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ:* Աշխատության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ) «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրության» և «Էջմիածնի գերագույն հոգևոր խորհրդի» ֆոնդերի նյութերը<sup>1</sup>: Դրանց մեջ կարելի է առանձնացնել հատկապես ՀՀ Արտաքին գործերի մինիստրության ֆոնդի նյութերը, որ վերաբերում են Պոնտոսին և պարունակում են հարուստ փաստական նյութ 1918-1920 թթ. հայ-հունական հարաբերությունների մասին<sup>2</sup>:

Ատենախոսության համար կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն Կոստանդնուպոլսի հունական տիեզերական պատրիարքարանի նյութերը<sup>3</sup>: Դրանք հիմնականում կազմված են ականատեսների՝ Հունական եկեղեցու տարբեր թեմերի առաջնորդների հաղորդած տեղեկություններից, մասնակներից և հաղորդագրություններից: Այս առումով ուշադրության են արժանի Պատրիարքարանի «Ան գրքերը»<sup>4</sup>:

Սույն հետազոտության մեջ հույն ժողովրդի պատմության և Օսմանյան կայսրությունում նրանց դրության հետ կապված հարցերի մեկնաբանման համար լայնորեն օգտագործվել են ինչպես հույն, հայ, այնպես էլ եվրոպացի ու

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 200 և ֆ. 409:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 182, 259, 357 (II):

<sup>3</sup> Oecumenical Patriarchate, Persecution of the Greeks in Turkey 1914 – 1918, Constantinople: Press of the Greek Patriarchate, 1919, Soteriadis G., An Ethnological Map Illustrating Hellenism in the Balkan Peninsula and Asia Minor, London: Edward Stanford, Ltd., 1918.; René Puaux; La Déportation et le Rapatriement des Grecs en Turquie: Paris: Edition du Bulletin Hellenique; 1919; Karavangelis G., The Turkish Atrocities in the Black Sea Territories: Copy of Letter of His Grace Germanos, Lord Archbishop of Amassia and Samsoun, Delegation of the Pan – Pontic Congress, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919, Les Atrocités Turques au Pont-Euxin, Copie d'une lettre de S. E. l'Archevêque d'Amassia et Samsoun Germanos, Paris: Imp. Dubois et Bauer, 1918.

<sup>4</sup> The Black Book of the Sufferings of the Greek People in Turkey from the Armistice to the End of 1920: Constantinople: Press of the Patriarchate, 1920; Livre Noir: La Tragédie Du Pont 1914 - 1922 [Black Book: The Tragedy of Pontus 1914 – 1922], Athènes: Imprimerie Phoenix, 1922,





շարք կարևոր հրապարակումներ, ուր ներկայացվում են հույների կոտորածների դրվագներ և թվային տվյալներ<sup>9</sup>:

Օգտագործվել են մի շարք հունական աղբյուրներ<sup>10</sup>: Աշխատանքի համար հատկապես պատմագիտական մեծ կարևորություն են ներկայացնում ազգությամբ հույն հեղինակներ Մ. Խարալամբիդիսի<sup>11</sup>, Կ. Ֆոտիադիսի<sup>12</sup>, Ի. Խասիոտիսի<sup>13</sup>, Ա. Ալեքսանդրիսի<sup>14</sup>, Թ. Մակիդիսի<sup>15</sup>, Յ. Ալցողլու<sup>16</sup>, Խ.

---

<sup>9</sup> Արոք, Ա տարի, N6, 1910, էջ 184; “The Scotsman”, 19 հունիսի 1914; 11 հունվարի 1915, 15 հուլիսի 1915; 18 օգոստոսի 1921; 12 սեպտեմբերի 1921; 7 հոկտեմբերի 1921; “The Times”, 21 մարտի 1919; 26 հոկտեմբերի 1921; 8 հունիսի 1922; “The New York Times”, 21 մարտի 1919; 10 հուլիսի 1921; 24 սեպտեմբերի 1922:

<sup>10</sup> Եνεպեκίδης Π. Κ., Οι διωγμοί των Ελλήνων του Πόντου (1908-1918), Αθήνα: Συλλόγος Ποντίων Αργοναύται-Κομνηνοί, 1962; Ραναζιάν Σ., Ιστορία των Άρμενο - Έλληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας, Αθήνα, 2010; Economides D. E., The Pontus and the Right Claims of its Greek Population: Topographical, Ethnographical and Historical Study: With two maps and various statistics, Constantinople: Imprimerie Française Leandre Mourkides, 1920; London Committee of Undreemed Greeks, The Liberation of the Greek people in Turkey, Manchester: Norbury Natzio & Co., 1919; Oeconomos L., The Tragedy of the Christian Near East - The Smyrna Holocaust, Dr. & Rev. Charles Dobson, London: The Anglo-Hellenic League, 1923; Manchester League of Unredeemed Hellenes, Turkey’s Crime: Hellenism in Turkey, Manchester: Norbury, Natzio & Co., 1919; Papadopoulos A, Persecution of the Greeks in Turkey before the European War, New York; Oxford University Press American Branch, 1919; Three Genocides, One Strategy: Colloquium Proceedings: Thessaloniki: Kyriakides Brothers S. A., 2008.

<sup>11</sup> **Օծաթալ լեթեհ ի ., Օիծաթեհ Է., Ի ի լեթեհ, Ի ծաթ լա լա լեթ, Նաթի լեթ, 2004;** Charalambidis M., The Pontian Question in the United Nations, Thessaloniki, 2004.

<sup>12</sup> Φωτιάδης Κ., Η Γενοκτονία των Ελλήνων του Πόντου, Θεσσαλονίκη, Τδρυμα της Βουλής των Ελλήνων Για τον Κοινοβουλευτισμό και τη Δημοκρατία, Αθήνα, 2004; Φωτιάδης Κ., Οι Εξισλαμισμοί της Μικράς Ασίας και οι Κρυπτοχριστιανοί του Πόντου, Θεσσαλονίκη, εκδότικός Οικος Αδελφών Κυριακίδη, 1988; Photiades K., The Annihilation of the Greeks in Pontus by the Turks: Tübingen: Union of the fighters for the Liberation of the Greek Lands seized by Turkey, 1987.

<sup>13</sup> Hassiotis I., The Greeks and the Armenian Massacres (1890-1896), Neo-hellenika 4 , Austin, Texas, 1981; Hassiotis I., “Shared Illusion: Greek – Armenian Co – operation in Asia Minor and the Caucasus (1917-1922)”, Greece and Great Britain During World War I, Thessaloniki: Institute of Balkan Studies, 1985, pp. 144 – 160; Hassiotis I., “The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)”, The Armenian Genocide; History, Politics, Ethics (ed. R. Hovhannisyán), New York: St. Martin’s Press, 1992, pp. 129-151.

<sup>14</sup> Alexandris A., The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations 1918-1974, Athens: Centre for Asia Studies, 1992.

<sup>15</sup> **Ի ձեթեթեհ Օ., Էթոիծեյ Ածաթա Ի ի լեթ, Աթեթաթա լեթ լեթ, Էթա. Նի թք. Թաթաթեթա լեթ Ի ձեթեթեհ Կծի լեթ, 2010;** Μαλκίδης Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Εκδόσεις Αιγαίον, Λευκωσία, 2010.

<sup>16</sup> Ալցողլու Յ., Անիծված աղյուծի բնաջնջուծ: Մեր Անատոլիայի հեղինականության մեթոդալորված բնաջնջան գործընթացի իրար հաջորդող փուլեր /Հուն. բարգւ.՝ Լ. Վարդանյան, Խծր. Ա. Գրքաշարյան/, Երևան: Կարտադրակետ, 2007.





Բնճիկյանի<sup>30</sup>, Հր. Սիմոնյանի<sup>31</sup>, Ա. Կիրակոսյանի<sup>32</sup>, Ռ. Սաֆրաստյանի<sup>33</sup>, Ա. Ավագյանի<sup>34</sup>, Ա. Ուլունյանի<sup>35</sup> և այլ հայ պատմաբանների գործերին, որոնք իրենց աշխատանքներում որոշակիորեն անդրադարձ կատարել են քննարկվող խնդրին<sup>36</sup>: Այս իմաստով հատկապես առանձնանում են Գ. Քլիլիճյանի աշխատությունները<sup>37</sup>, որոնցում խորը և բազմակողմանի վերլուծության են ենթարկվել Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հույն-թուրքական հարաբերությունները: Փաստական հարուստ տեղեկությունների հիման վրա հեղինակը հիմնավորել է երկու պետությունների

<sup>30</sup> Բնճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ, Եր.: Հայաստան, 1984; Էիձեթյի Ի. Ա., *Αόθαόαζέγ Ի նι αίνεϊ εϊ ιάδεε, Άδ.: Էζά-αϊ ΑΪ Άδι. ΝΝΘ, 1977.*

<sup>31</sup> Սիմոնյան Հ.ր., Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարաբանությունն ու քաղաքականությունը, Եր.: Հայաստան, 1986:

<sup>32</sup> Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թթ.), Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:

<sup>33</sup> Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագման արձագանքները (1876-1920), Եր.: «Լուսակն» հրատ., 2009; *Ναόθαήογϊ Թ., Άϊεόθεϊά ι նι αϊ εζϊ á ι ϊϊεέθε-áñεϊε æεζϊε Ի նι αίνεϊ εϊ ιάδεε (50-70 áá. XIX á), Άδάááϊ: Էζá- áϊ ΑΪ Άδι. ΝΝΘ, 1985.*

<sup>34</sup> *Áááεγϊ Α., Άáϊϊóεá 1915 á, Ի áóáϊεζϊ ú ϊðεϊγðεγ ε εմιϊεáϊεγ ðáøáϊεε, Άδάááϊ: Άéóóþϊ, 1999; Áááεγϊ Α., ×áðεáññεéε óáεóð á Ի նι αίνεϊ εϊ ιάδεε ε Óóðóεε (áοϊ ðáγ ϊϊεáεáϊ XIX – ϊáðááγ -áðááðú XX á). Ի ðá. ðáá. Á. Áááéñγϊ – Άð: Էζáááóεúñóáϊ “Άéóóþϊ” Ի ΑΪ ԹΑ: 2001.*

<sup>35</sup> *Óεóϊγϊ Άð., Ի ϊεéθε-áñεáγ εñοϊðεγ նιáðáϊ áϊϊε Άðáóεε, Ի ϊñεáá, 1998; Óεóϊγϊ Άð., Է εñοϊðεε Άðϊ γϊϊ-Άðá-áñεéð ϊóϊϊóáϊεé á 1918-1919 áá., Էñοϊðεéϊ-Óεéϊεϊáε-áñεéε æóðϊáε, 1987, N4, Άðáááϊ: Էζá. Áεáá. Ի áóε. Άðϊ. ΝΝΘ, ն. 230 – 233.*

<sup>36</sup> Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվրոկիո հայոց, Կահիրե: Նոր աստղ տպ., 1952; Անանյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ, Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր, արքայ և գաղթ» աշխատության մասին, Եր.: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի հրատ., 2005; Խոսրոս Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից բյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ): - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2004; Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927), Երևան: ՀՍՍՌ-ԳԱ հրատ., 1965; Հասրաթյան Մ. Ա. և ուրիշներ., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան: Երևանի համալսարանի տպ., 1986; Մեր Չմիտնիան և շրջակա քաղաքները, Նյու-Յորք: Չմյուռնիահայ միության տպ., 1960; Անասյան Հ., Հայ-հունական ազատագրական պայքարի մի էջ Կամոյիայի պատերազմի շրջանից (XVII դար), ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1954, թիվ 3, Երևան: ՀՍՍՌ-ԳԱԱ հրատ., էջ 85 – 99; Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1969; Housepyan M., Smyrna 1922, The destruction of a City, London, 1971.

<sup>37</sup> Քլիլիճյան Գ., Թուրք-հունական հարաբերությունները 1908–1914 թվականներին, Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988; Քլիլիճյան Գ., Երիթթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 8, 1970, Երևան: ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 11 – 16; Քլիլիճյան Գ., Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914), «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1976, թիվ 10, Երևան: ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 32 – 41:

հարաբերությունների և կայսրությունում հակահունական քաղաքականության անմիջական կապը:

Խնդրո առարկա հարցի համար պատմագիտական մեծ կարևորություն է ներկայացնում Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն, Հայաստանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն» աշխատությունը, որի մեջ վկայակոչելով արաբ հեղինակներին, ցույց է տրվում, որ Օսմանյան կայսրությունում պաշտոնական գաղափարախոսություն էր դարձել «թուրքերի բարձր ազգ լինելու», իսկ արաբների, հայերի, հույների և մյուս ժողովուրդների «ցածր ազգ լինելու» ռասայական տեսությունը<sup>38</sup>:

*ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԼՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:* Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան Հայաստան պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության ամբիոնի և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Աղբյուրագիտության բաժնի կողմից:

*ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:* Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

*Առաջաբանում* ներկայացվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանությունը, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության *առաջին գլուխը* կրում է «*Հույների բնակության շրջաններն ու դրությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին*» վերնագիրը և բաղկացած է երեք ենթագլխից: «*Հույների բնակության շրջաններն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին*» վերտառությունը կրող առաջին ենթագլխում ներկայացվում է հույների տեղաբաշխումն Օսմանյան կայսրությունում, նրանց բնակության հիմնական վայրերը, տարբեր բնակավայրերում հույն և թուրք բնակչության թվային հարաբերակցությունը: Սկսած օսմանյան առաջին մարդահամարից (1844 թ.)՝ կայսրությունում հույն բնակչության թվաքանակը պակաս ներկայացնելու միտում է նկատվում: Դա հատկապես ակնհայտ է դառնում 1881 թ. մարդահամարի ժամանակ, երբ Բարձր Դուռը՝ կապված 1878 թ. Բեռլինի կոնգրեսով ստանձնած պարտավորություններով, ձգտում էր ամեն կերպ նվազեցված ներկայացնել հայերի թվաքանակը: Այս քաղաքականությունից անմասն չմնացին նաև հույները, որոնց թիվը գնահատվում էր 2.332.197 մարդ<sup>39</sup>: Սակայն ոչ թուրքական աղբյուրները վկայում են բոլորովին այլ բան: Անդրադառնալով Օսմանյան կայսրության բնակչությանը՝ Էդվին Փիրսը «Թուրքիան և իր բնակչությունը» աշխատության մեջ նշում է, որ մինչև Բալկանյան պատերազմները Օսմանյան պետության

<sup>38</sup> Hovhannisyán N., The Armenian Genocide, Armenocide – The Most Genocidal Genocide, In Ten Languages of the World, Yerevan: «Zangak-97», 2009.

<sup>39</sup> Karpát K. H., Ottoman Population 1830-1914, Demographic and social characteristics, Wisconsin: The University of Wisconsin Press, 1985, p. 148

տարածքում ապրել է շուրջ 3.8 մլն հույն, որից 1.7 մլն-ը Եվրոպայում (ներառյալ Կ. Պոլիսը), 1.6 մլն-ը Ասիայում, իսկ 500 հազարն Էգեյան կղզիներում<sup>40</sup>: Բալկանյան պատերազմների արդյունքում Հունաստանին անցան հարավային Մակեդոնիան, հարավային Էպիրոսը, Կրետեն և Էգեյան կղզիները, և հասկանալի պատճառներով կայսրությունում հույների թիվը նվազեց: Ազգերի լիգայի փախստականների հարցերի համաձեռնողի անդամ Ա. Ա. Պալլիսի տվյալներով այդ շրջանները միասին ունեին 1.357.000 հույն բնակչություն<sup>41</sup>: Արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կայսրությունում հույների թվաքանակը պետք է լիներ շուրջ 2.5 միլիոն, սակայն օսմանյան վերջին՝ 1914 թ. նախապատերազմյան մարդահամարի համաձայն պետության մեջ ապրում էր 1.792.206 հույն, իսկ հայերի թիվը 1.229.007 էր<sup>42</sup>:

Մյայես, 1918 թ. Փարիզում առանձին գրքուկով լույս տեսավ «Հույները Թուրքիայում» հոդվածը, որը անգլերենից ֆրանսերեն էր փոխադրվել հեղինակավոր «Նոր Եվրոպա» հանդեսից: Հոդվածում ներկայացված վիճակագրական աղյուսակը նախապատերազմյան Թուրքիայում հաշվում էր 2.515.000 հույն<sup>43</sup>: Հաջորդ կարևոր ապացույցը Կոստանդնուպոլսի հունական տիեզերական պատրիարքարանի տվյալներն են, որոնց համաձայն կայսրությունում ապրում էր 2.543.343 հույն<sup>44</sup>:

Ենթազիխում ներկայացվում են Օսմանյան կայսրության բոլոր վիլայեթներում հույների բնակության վայրերը և քննարկվում թվաքանակի հարցը: Հույն բնակչության թվաքանակի վերաբերյալ ամենատարբեր աղբյուրների համադրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած թուրքական մարդահամարների դիտավորությանը՝ կեղծել ու նվազագույնի հասցնել հույների թիվը, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում ապրում էին շուրջ 2,5 մլն հույն<sup>45</sup>:

Երկրորդ՝ «Հույների ազատագրական շարժումներն ու կոտորածները 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին» ենթազույխն անդրադառնում է նշված ժամանակահատվածում հույն ժողովրդի դրությանը Օսմանյան կայսրությունում: Խոսվում է հույների իրավական կարգավիճակի մասին, ապա Թանզիմաթի ազդեցությունը և հետևանքները կայսրության հպատակ հույների

---

<sup>40</sup> Pears E., Turkey and its people, London: Methuen & Co., 1912, p. 94.

<sup>41</sup> Pallis A. A., Greece's Anatolian Venture and After, A Survey of the Diplomatic and Political Aspects of Greek Expedition to Asia Minor (1915-1922), London: Methuen, 1937, p. 224.

<sup>42</sup> Karpat K. H., նշվ. աշխ., էջ 188-189 :

<sup>43</sup> Les Grecs en Turquie: Deux Articles, traduits de l'Anglais, de la Revue The New-Europe, de Londres (Nos des 14 et 21 novembre), Paris: Imprimerie Chaix, 1918, p. 4.

<sup>44</sup> Soteriadiis G., An Ethnological Map Illustrating Hellenism in the Balkan Peninsula and Asia Minor, London: Edward Stanford, Ltd., 1918, p. 14 -15.

<sup>45</sup> Memorandum of the Ecumenical Patriarchate and of the Armenian Patriarchate of Constantinople for The Peace Conference, Paris: Imp. Chaix, 1919, p. 4; London Committee of Undreamed Greeks, The Liberation of the Greek people in Turkey, Manchester: Norbury Natzio & Co., 1919, p.3.; Λαμέρας Κ., Η Περί Μικράς Ασίας και των εν Αυτή Κρητοχριστιανών, Αθήνα, 1921, σελ. 8.

համար: Ինչպես արևմտահայության դեպքում՝ օսմանահպատակ հույների մոտ էլ սկսվեց «Սահմանադրական շարժում»: Այն ուներ գրեթե նույն շարժառիթներն ու պատճառները: Արդյունքում Օսմանյան կառավարությունը վավերացրեց Հունական «Գլխավոր / Ազգային կանոնադրությունը»<sup>46</sup>:

Օսմանյան կառավարության բարենորոգումներն այդպես էլ էական փոփոխություն չմտցրեցին հպատակ հույների դրության մեջ, իսկ Թանզիմաթի սկզբունքների իրագործման փոխարեն հետադիմական դիրքորոշում որդեգրվեց, որն էլ դարձավ 1866-1869 թթ. կրետական ապստամբության պատճառներից մեկը: Իսկ իրագործված բարեփոխումները մահմեդական բնակչության կողմից ընկալվեցին իբրև վիրավորանք և ազգային արժանապատվության ոտնահարում: Դա դրսևորվեց դեռևս 1839 թ. Հաթթը շերիֆից հետո, երբ 1841 թ. Տրապիզոնի հույները համաձայն Թանզիմաթի բարենորոգումների, ստանալով իրավունք, վերանորոգեցին իրենց եկեղեցին, իսկ մահմեդական ամբոխը ավերեց եկեղեցու վերանորոգված հատվածը<sup>47</sup>: Իսկ 1876 թ. հետո տեղի ունեցավ հակաքրիստոնեական տրամադրությունների էլ ավելի կտրուկ աճ, որն աստիճանաբար ընդունում էր քրիստոնյաների ֆիզիկական ոչնչացման կոչերի ձև<sup>48</sup>:

1876 թ. Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանի իշխանության գալուց հետո Օսմանյան կայսրության ազգային հարցում որդեգրվեց ավելի հետադիմական քաղաքականություն, իսկ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների ժամանակ Աբդուլ Համիդը հույների նկատմամբ վարում էր սիրաշահելու քաղաքականություն, որի հետապնդած նպատակները հետևյալներն էին.

ա) Կապված միջազգային բարդ իրադրությամբ՝ խուսափել Հունաստանի հետ առճակատումից,

բ) Մեկ խրել հույն և հայ քրիստոնյաների հարաբերությունների մեջ և թշնամանք սերմանել նրանց միջև,

գ) Հասնել հույների չեզոքությանը Հայկական հարցում՝ ամեն գնով թույլ չտալով խառնվել դրան,

դ) Ներկայացնել, որ հայերի՝ բարեփոխումներ անցկացնելու պահանջը տեղին չէ, քանի որ այն ընդգրկում է ոչ բոլոր քրիստոնյաներին:

Սակայն այդ քաղաքականությունն իր նպատակներին չհասավ. բացահայտվեց արդեն 1896 թ. բռնկված Կրետական ապստամբության ժամանակ:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է «*Հույների դրությունն Օսմանյան կայսրությունում 1908-1914թթ.*»: 1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո բացված օսմանյան խորհրդարանում 288 երեսփոխաններից 147-ը թուրք էին, 141-ը՝ այլազգիներ, որից 26-ը հույն<sup>49</sup>:

<sup>46</sup> Alexandris A., The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations, 1918-1974, Athens: Centre for Asia Studies, 1992, p. 33.

<sup>47</sup> Մաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Եր.: «Լուսակն» հրատ., 2009, էջ 118:

<sup>48</sup> Նույն տեղում., էջ 162-163:

<sup>49</sup> Ahmad Feroz, The Young Turks: The Committee of Union and Progress in Turkish Politics 1908 – 1914, Oxford: Clarendon, 1969, p. 28:

Սակայն քրիստոնյաների նկատմամբ դաժան քաղաքականությունը, որ վարում էր Աբդուլ Համիդը մինչև երիտթուրքերը, նոր դրսևորումներ ստացավ վերջիններիս իշխանության գալուց հետո: Մայսե, 1909 թ. Ադանայի հայերի կոտորածի ժամանակ զոհվեց նաև 1.000 հույն<sup>50</sup>:

Ինչպես հայ, այնպես էլ հույն ժողովրդի համար ճակատագրական եղավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության չորրորդ համագումարը Սալոնիկում (1911 թ. սեպտեմբերի 29 - հոկտեմբերի 9): Համագումարում ընդունված որոշումները դառնալու էին երիտթուրքերի հետագա տարիների քաղաքականության հիմքը, որի նպատակը թուրքական ազգի տիրապետության ամրապնդումն էր և թուրքական միջավայրում այլ ազգերի՝ գլխավորապես քրիստոնյաների՝ հայերի և հույների ձուլումը<sup>51</sup>:

Հույների առաջին լայնազանգված արտաքսումներն ու սպանությունները սկսվեցին Բալկանյան պատերազմների ժամանակ և շարունակվեց 1914 թ. ընթացքում: Արևելյան Թրակիայում սկսված հույների բռնագաղթն ու սպանությունները 1914 թ. գարնանը ստանում են համակարգված բնույթ: Հունական բնակչության նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը դրսևորվում է հետևյալ գծերով. ա) հարձակումներ հունական գյուղերի և գյուղական բնակչության վրա Հատուկ կազմակերպության հրոսակախմբերի (չեթե) կողմից, բ) բնակչությանը ահաբեկչության և սպանությունների միջոցով հարկադրել՝ լքելու իրենց տները, գ) ամբողջ գյուղերի դատարկում, դ) հույներին պատկանող ձեռնարկությունների գավթում<sup>52</sup>:

Սկսած 1914 թ. գարնանից հակահունական բռնությունների թատերաբեմ է դառնում Արևմտյան Փոքր Ասիան: Առաջին նկատելի իրադարձությունները ծավալվեցին Չմյուռնիայից 70 մղոն հյուսիս գտնվող Ադրամիտիում քաղաքում: Մայիս ամսին այստեղ ժամանեցին մեծ քանակությամբ մահմեդական փախստականներ (մուհաջիրներ): Մտնելով քաղաք՝ մահմեդական խուժանը սկսեց թալանել հույների տներն ու խանութները<sup>53</sup>:

Արևմտյան Փոքր Ասիայի հունաշատ քաղաքները մեկը մյուսի հետևից ենթարկվեցին տեղահանությունների: Հարկ է նշել Ֆոկեայում ծավալված ողբերգական իրադարձությունները մեծ արձագանքներ ունեցան Մարսելում՝

---

<sup>50</sup>Hassiotis I., The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923), The Armenian Genocide: History, Politics, Ethics (ed. R. Hovannisyan), New York: St. Martin's Press, 1992, p. 132.

<sup>51</sup> Ավագյան Ա., Պանթրոպիզմի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ և չորրորդ համագումարներում, «Հայոց ցեղասպանություն. Պատճառներ և դասեր», Երևան, 1995, հ. 3, էջ 5-20; *Αἰῶνες Α., Αἰτίθεα 1915 ἄ., Ἰ ἀοιφεῖ ἰ ἰθεῖθεῖ ἰ εἰῖῖεῖεῖ ἰθεῖεῖεῖ, Ἀδαῖ: Ἀεοοῖε, 1999, ἡ. 18.*

<sup>52</sup> Papadopoulos A, Persecution of the Greeks in Turkey before the European War, New York; Oxford University Press American Branch, 1919, p. 97.

<sup>53</sup> Διωγοῖ των Ελλήνων εν Θράκη και Μικρασία: Αυθεντικά εκθέσεις και επίσημα κείμενα: Ἐκκλησις προς το ελληνικόν γένος και την δημοσίαν Γνώμην του πεπολιτισμένου κόσμου, Επιτροπή των εν Μυτιλήνη Μικρασιατών Προσφύγων, Αθήνα., Πανελληνίου Κράτους, 1915, σελ. 78-88.

որպես Ֆոկեայից գաղթած հույների վերաբնակեցման քաղաք<sup>54</sup>: Այստեղ կատարված ոճրագործություններին ականատես են եղել ֆրանսիացի հնէաբաններ Մ. Մանսիեն և Ֆ. Սարտիոն: Վերջինս նշում է, որ 1914 թ. հունիսի 11-ին հին Ֆոկեայի շրջակա գյուղերի (Գյորեն-Բոյոյ, Մույոջուկ, Բաղ-Արասաի, Վարի) հույն բնակչությունը ենթարկվում է հարձակման: Բուն Ֆոկեայի վրա հարձակումը տեղի է ունենում հունիսի 12-ին, սկսվում է հույն բնակչության ջարդը<sup>55</sup>: Այս շրջանում 3.800 տներից 3.000-ը քանդվեց: Բնակչությունն արտաքսվեց հիմնականում շրջակա կղզիներ:

Հակահունական արշավը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ հույն ժողովրդի համար: 1914 թ. ամռանը կազմված միջազգային հանձնաժողովը Թալեսթի ուղեկցությամբ Էզեյան ծովեզերքին կատարած շրջագայության ժամանակ արձանագրեց, որ այդ ամենի հետևանքով այդ շրջանների զգալի մասն անայացել է: Այդ հանձնաժողովի անդամ ռուսական ներկայացուցիչ Տուխոլկան հաղորդում է, որ ամբողջ Էզեյան ծովափից հույների վտարման ծրագիրը նախօրոք նշակված էր կառավարության կողմից<sup>56</sup>:

1913-1914 թթ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը տեղահանված և կոտորված հույների թիվն ըստ Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքարանի տվյալների կազմում է 284.172 մարդ<sup>57</sup> (Թրակիա և Փոքր Ասիա՝ առանց Պոնտոսի), որից 153.890-ը Փոքր Ասիայից, իսկ 130.282-ը՝ Թրակիայից: Այլ աղբյուրների տվյալները հիմնականում համընկնում են Պատրիարքարանի թվերին՝ մի քիչ ավելի կամ պակաս ներկայացնելով: Մասնավորապես, ըստ Բարթոնի, նշված ժամանակահատվածում միայն Փոքր Ասիայի արևմտյան ափից բռնագաղթված հույների թիվը ավելի քան 100 հազար<sup>58</sup> էր (այս տվյալը չի ներառում այլ շրջանները): Բսկ բրիտանական «The Morning Post» օրաթերթի համաձայն Թրակիայից և Փոքր Ասիայից վտարվածների թիվը կազմում է 350.000<sup>59</sup>:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Հույն ժողովուրդն Առաջին համաշխարհային և 1919-1922 թվականների հույն-թուրքական պատերազմի տարիներին: Հայ-հունական համագործակցության փորձերը» և քաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը, որ կրում է «Հույների

---

<sup>54</sup> Horton G., The Blight of Asia: An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna, Indianapolis: The Bobbs-Merrill Company Publishers, 1926, p. 46.

<sup>55</sup> Anglo – Hellenic League, Letters on the Expulsion of Greeks from Asia Minor, and in reply to ill-treatment inflicted on Turks in Greek Macedonia, London: The Anglo – Hellenic League, 1914, p. 8-9.

<sup>56</sup> Քիլինջյան Գ., Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 8 (332), Երևան, 1970, էջ 14:

<sup>57</sup> René Puaux; La Déportation et le Rapatriement des Grecs en Turquie: Paris: Edition du Bulletin Hellenique; 1919; p. 8.

<sup>58</sup> Barton J., Story of Near East Relief (1915-1923): An Interpretation, New York: Macmillan, 1930, p. 63.

<sup>59</sup> Manchester League of Unredeemed Hellenes, Turkey's Crime: Hellenism in Turkey, Manchester: Norbury, Natzio & Co., 1919, p. 31.

*զանգվածային տեղահանություններն ու կոտորածներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»* վերնագիրը, վերլուծում է 1914-1918 թթ. հույների զանգվածային տեղահանությունների ծրագիրը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հույների հալածանքներն ու ջարդերը, որ սկսվեցին ավելի վաղ, քան հայերինը, ընդհանուր առմամբ, այն նույն քաղաքականության շարունակությունն էին, որ նրանց նկատմամբ կիրառվեց Բալկանյան պատերազմների վերջին շրջանում և 1914 թ. գարնան և ամռան ամիսներին:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո Երիտթուրքական վարչակարգն ընդունեց մի շարք օրենքներ ու հրամաններ, որոնք պետք է կարգավորված և նպատակային բնույթ հաղորդեին հակահունական քաղաքականությանը: Դրանցից առաջինը 1914 թ. օգոստոսի 3-ին Ռազմական նախարարության հրամանն էր, որի համաձայն 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ ենթակա էին զորակոչման: Ջորակոչված քրիստոնյաներին շատ չանցած զինաթափ էին անում և նրանցից կազմում աշխատանքային գումարտակներ: Ընդհանուր առմամբ, ըստ հունական տվյալների՝ աշխատանքային գումարտակներում հավաքված 18-45 տարեկան հույների թիվն անցնում էր 200.000-ից<sup>60</sup>, որոնցից առնվազն 150.000-ը նահատակվեց<sup>61</sup>:

Պատերազմն սկսելուց շուրջ մեկ ամիս անց Թալեաթ փաշան իր զինակիցների հետ «շրջագայության մեկնեց» Արևելյան Թրակիայի Մակրիի ու Լիվիսիի շուրջ յոթանասուն գյուղեր և ծավալեց հակահունական քարոզչություն<sup>62</sup>: Մի քանի տարի շարունակվող հալածանքներից, սպանություններից և արտաքստումներից հետո այդ բնակավայրերը դառնում են անմարդաբնակ: 1918 թ. ապրիլին Լիվիսիի ինը հարյուր ընտանիքից մնացել էր 25-ը, իսկ Մակրիի հինգ հարյուր ընտանիքից՝ 11-ը<sup>63</sup>:

Փոքր Ասիայի արևմտյան ափի հունաշատ բնակավայրերը ևս գերծ չմնացին ողբերգական իրադարձություններից, որտեղից մինչև 1914 թ. վերջին արդեն տեղահանվել էր 120.000 հույն<sup>64</sup>: Կիդոնիա (Այվալի) քաղաքը, որը գլխավորապես հունաբնակ էր և ուներ ավելի քան 30.000 հույն բնակչություն, լիովին դատարկվեց: Քաղաքացիների տեղահանությունները կատարվեցին ոչ անմիջապես: Մի մասը տեղահանվեց 1914 թ. ընթացքում, երկրորդ մասը՝ 1915 թ. հուլիսին և վերջինը՝ 1917 թ. ապրիլին:

Այդինի և Բրուսայի վիլայեթների գրեթե ոչ մի բնակավայր գերծ չմնաց տեղահանություններից, ջարդերից և թալանից: Դրանց թվում էին Չեշմեն, Սոկիան (Անեոն), Մազնեսիան (Մանիսա), Պիսիդիան (Ադալիա) և այլն:

<sup>60</sup> Φωτιάδης Κ., Οι Εξισλαμισμοί της Μικράς Ασίας και οι Κρυπτοχριστιανοί του Πόντου, Θεσσαλονίκη, εκδότικος Οίκος Αδελφών Κυριακίδη, 1988, σελ. 442.

<sup>61</sup> Manchester League of Unredeemed Hellenes, Turkey's Crime..., p. 30.

<sup>62</sup> Persecution and Extermination of the Communities of Macri and Livissi (1914-1918), Paris, Imprimerie Chaix, 1919, p. 3.

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>64</sup> Greeks in Asia Minor, Fresh Campaign of Persecution, «The Scotsman», 11<sup>th</sup> January, 1915, p. 8.



գոհվեց սովից ու գրկանքներից<sup>68</sup>: 240.000 տվյալը հանդիսանում է հյուսիսատոսների հաղորդագրություններում նշված թվերի գումարը, սակայն չի ներառում Փոքր Ասիայի այն շրջանները, որոնք տեղ չեն գտել դրանցում: Ուստի այդ թիվը բավական պակաս է իրական թվից: Առավել ամբողջական և արժանահավատ են բրիտանական «The Morning Post» օրաթերթի կուստանդուուպոլսյան հատուկ թղթակցի տվյալները, որոնց համաձայն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 450.000 հույն բռնագաղթվեց, որի ընթացքում 150.000-ը տեղափոխվեցին աշխատանքային գումարտակներ և սպանվեցին, իսկ 250.000-ը Փոքր Ասիայից և Թրակիայից արտաքսվեցին Հունաստան: Նույն աղբյուրի համաձայն դրան պետք է ավելացնել Բալկանյան պատերազմներից (ներառյալ) մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածում 350.000 արտաքսվածներին<sup>69</sup>: Ըստ ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի՝ տեղահանված հույների թիվը տատանվում է 200.000-ից մինչև 1.000.000<sup>70</sup>:

Հունական պատրիարքարանի տվյալներով 1913-1918 թթ., ընդհանուր առմամբ, տեղահանվել է 774.235 հույն, որից Թրակիայից՝ 218.767, Արևմտյան Փոքր Ասիայից՝ 298.449, Պոնտոսից՝ 257.019<sup>71</sup>:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը կրում է «*Հույների զանգվածային տեղահանություններն ու կոտորածները 1919-1922 թթ. Հույն-թուրքական՝ պատերազմի ընթացքում: Չմյուռնիայի աղետը*» վերնագիրը: Այստեղ նկարագրվում է պատերազմի ժամանակ քեմալական ուժերի կողմից Փոքր Ասիայի հույն բնակչության տեղահանությունների և կոտորածների վերջնական փուլը:

1919 թ. Էրզրումի և Սվազի կոնգրեսներից հետո, երբ Մ. Քեմալն ընտրվեց «Ներկայացուցիչների կոմիտեի» նախագահ, համակարգվեց հակահունական քաղաքականությունը Պոնտոսում: Ամենուր տարվում էր քարոզչական ուժեղ պայքար ընդդեմ հույների՝ կոչ անելով հավատացյալներին սպանել «գլավուրների»: Նրանք փակցնում էին հայտարարություններ ամենուր՝ թուրքական դպրոցներում, սրճարան-խանութներում, մզկիթներում և կրոնական կենտրոններում, բոլոր պետական շինություններում, նույնիսկ փողոցի անկյուններում՝ դրդելով թուրքերին բնաջնջել հույներին և մաքրել Թուրքիան այդ «անհավատ շներից»<sup>72</sup>:

1921 թ. մարտից, ուժեղացան հույն-թուրքական ռազմաճակատից արևելք ընկած տարածքների հույների հալածանքները: Պահպանվել է Ամերիկյան

<sup>68</sup> Sacher H., The Emergence of the Middle East: 1914-1924, New York: Alfred A. Knopf, 1969, p. 309.

<sup>69</sup> Manchester League of Unredeemed Hellenes, Turkey's Crime..., p. 31.

<sup>70</sup> Morgenthau H., Secrets of The Bosphorus, London: Hutchinson & Co., 1918, p. 212-213.

<sup>71</sup> Tsirkinidis H., "At last we uprooted them..." : The Genocide of Greeks of Pontos, Thrace and Asia Minor, through the French archives, Thessaloniki: Kyriakides Brothers, 1999, p. 107.

<sup>72</sup> Murat J., The Great Extription of Hellenism and Christianity in Asia Minor, the historic and systematic deception of World opinion concerning the hideous Christianity's uprooting of 1922, Miami-Florida: A Triantafillis publ., 1999, p. 60-61.

նպաստամատույց կազմակերպության Խարբերդի հիվանդանոցի տնօրեն Մարկ Հ. Ուարդի օրագիրը, ուր ներկայացվում են հույների կոտորածներն ու արտաքսումները 1921 թ մայիսի 26-ից մինչև 1922 թ. փետրվարի 23-ը ընկած ժամանակահատվածում: Ըստ Ուարդի՝ Խարբերդ հասած գաղթականների թիվը կազմել է 20.378 մարդ, որից 18.000-ը հույն, իսկ 2.000-ը հայ<sup>73</sup>: Նա պնդում է, որ այս շրջանում Սվազից Խարբերդ պետք է ուղարկված լինի 30.000 մարդ, որից 5.000-ը խուսափել է, փախել է՝ անցնելով տարբեր գյուղերով և քաղաքներով<sup>74</sup>:

1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում իր աշխատանքներն է սկսում Ազգային սննդ ժողովը, որը նույն ամսի 29-ին ընդունեց «Հայրենիքի դավաճանության», իսկ սեպտեմբերի 11-ին «Դատալիքների վերաբերյալ» օրենքները: Դրանից հետո արդեն երևան եկան հատուկ տրիբունալները՝ «Անկախության դատարանները»: Այդ դատարանները մահվան դատավճիռներ էին կայացնում ուղղափառ հույների դեմ՝ նրանց թվում շատ գործարարներ, քաղաքապետեր ու գյուղապետեր, հրատարակիչներ, Օսմանյան խորհրդարանի հույն նախկին պատգամավորներ: Մի քանի ամսվա ընթացքում Փոքր Ասիայի հույն մտավորական և քաղաքական էլիտան սպանդի ենթարկվեց: Միայն Ամասիայի անկախության դատարանը 600-ի մոտ մարդու դատապարտեց, որոնք կախաղան բարձրացվեցին<sup>75</sup>: Նրանց թվում էին Տրապիզոնի միտրոպոլիտ Խրիստանթոսը, Կերասունի և Խալդեսայի միտրոպոլիտ Լավրենտիոսը, Նիքսարի միտրոպոլիտ Պոլիկարպոսը<sup>76</sup> և բազմաթիվ եպիսկոպոսներ:

Սեպտեմբերի 9-ին Չմյուռնիա մտան քեմալական կանոնավոր և անկանոն հեծելազորը Նուրեդդին փաշայի գլխավորությամբ: Բրիտանացի պատմաբան և լրագրող Ա. Թոյնբին հավաստիացնում է, որ թուրքական զորքերը որոշակիորեն, անհասականորեն և դիտմամբ մինչև հիմքերն այրել են յուրաքանչյուր տուն<sup>77</sup>:

Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության գործադիր քարտուղար Է. Հ. Բիերստադտը նշում է, որ մոտավոր հաշվարկներով 100.000 մարդ կոտորվեց, 280.000-ը քշվեց ծովափ, իսկ 160.000-ը արտաքսվեց թուրքերի կողմից երկրի խորքերը, որոնց էլ «երբեք չտեսան»<sup>78</sup>: Ամերիկյան հյուպատոս Ջ. Հորթոնը, որ Չմյուռնիայում էր մինչև 1922 թ.

<sup>73</sup> Ward Mark H., The Deportation in Asia Minor 1921 – 1922, London: Anglo – Hellenic League & British Armenia Committee, 1922, p. 3.

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Հայկունի Պ. Ա., Թօփալ Օսման և դեպքերը Մարզուանի մեջ Ջինադադարեն յետոյ, Արենք: Տպ. «Նոր օր», 1924, էջ 32:

<sup>76</sup> Το Μαρτυριον του Ποντου, Ελληνικός Σύλλογος Κοινωνίας Εθνών, Αθήνα: Αλεξ. Βιτσικουνακη, 1922, σελ. 12.

<sup>77</sup> Toynbee A. J., The Western question in Greece and Turkey. A study in the contact of civilizations, London: Constable and Co., 1922, p. 152

<sup>78</sup> Bierstadt E. H., The Great Betrayal, A Survey of The Near East Problem, New York: Robert M. McBride and Company, 1924, p. 36.

սեպտեմբերի 13-ը, նշում է, որ գոհերի թիվը կազմում է 100-120.000<sup>79</sup>: Սակայն հենց ինքը՝ Հորթոնը ընդգծում է, որ դժվար է տալ գոհերի ճշգրիտ թիվը:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը վերնագրված է «Հայ-հունական համագործակցության փորձերը (XX դարի առաջին քառորդ)»: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գրեթե զուգահեռաբար իրականացվում էր երկու ժողովուրդների զանգվածային կոտորածների և արտաքսումների քաղաքականություն: Այն վայրերում, ուր հույն և հայ բնակչությունն ապրել է հարևանությամբ, 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ ցուցաբերել է ինքնապաշտպանության բազմաթիվ օրինակներ: Հատկանշական է Ջանիկի լեռներում (Ամիսոսի և Սամսունի միջև) հայկական հայրուկային մարտախմբերի մղած երկարատև գոյամարտը, որի ընթացքում՝ 1916 թ. նոյեմբերին, ծանր կորուստների գնով փրկվել և ռուսական զբաղման գոտի է փոխադրվել մոտ 200 հույն ընտանիք<sup>80</sup>:

Հույները ևս իրենց հերթին հնարավորության սահմաններում օգնում էին հայերին՝ թուրքական յաթաղանից փրկվելու համար: Բազմաթիվ հայեր ապաստան գտան հույների տներում, հայ երեխաներ էլ հունական Ուղղափառ եկեղեցու հաստատություններում<sup>81</sup>: Այս առումով հատկապես աչքի ընկավ Տրապիզոնի հույն միտրոպոլիտը, ով 1915 թ. փրկեց երկու հարյուր հայ տղայի և նրանց տեղավորեց որբանոցներում<sup>82</sup>: Նրա շնորհիվ նաև 150 հայ աղջիկ տեղավորվեց հունական ընտանիքներում<sup>83</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո իրական հնարավորություններ ստեղծվեցին հարաբերություններ հաստատելու և կառուցելու ուղղությամբ: 1919 թ. փետրվարի 3-ին ու 4-ին Փարիզի վեհաժողովում Հունական խնդիրը ներկայացնելիս վարչապետ Է. Վենիզելոսը բարձրացրեց նաև Հայկական հարցը<sup>84</sup>:

1920 թ. հունվարին Երևան է ժամանում միտրոպոլիտ Խրիսանթոսը (Ֆիլիպիդես (1882-1949))՝ Տրապիզոնի վերջին միտրոպոլիտը (1913-1923): Հայաստանի կառավարության հետ բանակցությունների ժամանակ քննարկվում էր Պոնտոսի կարգավիճակի հարցը: Պոնտոսցիները գիտակցում էին, որ առանց հայերի հետ միասնաբար գործելու այդ հարցում հաջողության հնարավոր չէ հասնել: Միավորման հասնելու համար գործադրելի էին համարվում թե՛ դիվանագիտական միջոցները, թե՛ զենքը: Դա նշանակում էր, որ Փարիզի վեհաժողովում հայ և հույն պատվիրակությունները գործելու էին համատեղ, իսկ եթե հարցը դրական լուծում չստանար, դիմելու էին համատեղ

<sup>79</sup> Horton G., նշվ. աշխ., էջ 173-174:

<sup>80</sup> Ραμαζιάν Σ., Ιστορία των Άρμενο - Έλληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας, Αθήνα: Εκδοτική Παράγωγη, 2010, σελ. 145.

<sup>81</sup> Hassiotis I., "The Armenian Genocide and the Greeks...", p. 130.

<sup>82</sup> Պառչպի Հ., Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան / Թարգմ.՝ Միքայել Շամտանճեան/ Կ. Պոլիս: Տպագր. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1919, էջ 30 -31:

<sup>83</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան: Հայաստան, 1991, էջ 543:

<sup>84</sup> Նոյն տեղում, էջ 299:

ռազմական գործողությունների<sup>85</sup>: Հայկական կառավարությունը գտավ, որ անհրաժեշտ է «խուսափել սահմանային հարցից», Պոտտոսը Հայաստանի Հանրապետության մեջ մտցնել դաշնակցային կարգավիճակով և այդ մասին գրավոր պատասխան տալ միտրոպոլիտին<sup>86</sup>:

Սակայն Հայաստանի առաջին հանրապետության անկումից և խորհրդայնացումից հետո Հայաստանը չէր կարող առանձին արտաքին քաղաքականություն իրականացնել, իսկ խորհրդային Ռուսաստանն ուներ ընդգծված թուրքամետ կողմնորոշում: Չնայած պետական մակարդակի համագործակցությունը դադարեց, այնուամենայնիվ, 1919 թ. սկսված և մինչև 1922 թ. շարունակվող Հույն-թուրքական պատերազմի տարիներին մեծ թվով հայեր մարտնչում էին հունական բանակի կազմում:

*Երրորդ գլուխը վերնագրված է «Հունական հարցը Լոզանի կոնֆերանսում: Հայոց զեղասպանության և հույների զանգվածային կոտորածների թուրքական քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները»:* Այն բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը կրում է «Լոզանի կոնֆերանսում «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը» ու դրա հետևանքները» վերնագիրը:

Լոզանի կոնֆերանսում հունական պատվիրակությանը առավել դժվարին ու պատասխանատու պայքար էր սպասվում Թուրքիայի տարածքում մնացած հույն բնակչության հարցի քննարկման ընթացքում: Թուրքական կողմը պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշայի զխսավորությամբ բանակցությունների ընթացքում հաստատակամորեն պնդում էր Թուրքիայի տարածքից մնացած հույների դուրսբերման վրա: Մա թուրքական պատվիրակության կարևորագույն խնդիրն էր: Այս խնդրին գումարվեց նաև թուրքերի պահանջը՝ հեռացնել Տիեզերական պատրիարքությունը Կոստանդնուպոլիսից:

1922 թ. դեկտեմբերի դրությամբ երկրից «արտագաղթել էր» մնացած հույն բնակչության մեծամասնությունը: Այսպես կոչված փոխանակման պայմանագրի ստորագրումից առաջ արդեն ըստ Ջեյմս Բարտոնի 1922 թ. ընթացքում ավելի քան 1,000,000-ը դուրս էր եկել երկրից: Գրան գումարելով նաև 1923 թվականը՝ նա նշում է, որ 1,4 մլն մարդ տեղափոխվեց Հունաստան<sup>87</sup>: Մեկ այլ տվյալի համաձայն 1,250,000 հույն և 100,000 հայ «զցվեցին» Հունաստան, որից միայն 1/5-ը կարողացավ տեղավորվել: Փաստորեն, մինչև պայմանագրի ստորագրումն արդեն 1,000,000-1,200,000<sup>88</sup> մարդ «զբել» էր Թուրքիան: Հաշվի առնելով այս ամենը՝ ակնհայտ է դառնում, որ Է. Վենիզելոսի կառավարությունը կանգնած էր կատարված փաստի առաջ. նրա խնդիրն էր արդեն պաշտպանել Թուրքիայում մնացած ոչ մեծաթիվ հայրենակիցներին:

<sup>85</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 182, թ. 1:

<sup>86</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 259, թ. 1:

<sup>87</sup> Barton J., նշվ. աշխ., էջ 161 և 165:

<sup>88</sup> Walker Chr., Armenia: The Survival of a nation, New York: St. Martin's Press 1980, p. 219.

Ինչպես նշվեց, մինչև բուն պայմանագրի ստորագրումը Թուրքիայից Հունաստան էր գաղթել 1 մլն-ից 1.250.000 մարդ: Պայմանագիրը ստորագրելուց հետո արդեն Թուրքիայից Հունաստան գաղթածների իրական թիվը, ըստ հիշյալ հանձնաժողովի պաշտոնական տվյալների, կազմում է 189.916 մարդ, իսկ Հունաստանից Թուրքիա գաղթողների թիվը՝ 355.635: Մեկ այլ տվյալի համաձայն փախստականների թիվը համապատասխանաբար 192.356 է և 354.647<sup>89</sup>:

Երկրորդ ենթագլուխը կրում է «Հայոց ցեղասպանության և հույների զանգվածային կոտորածների թուրքական քաղաքականության ընդհանրություններն ու տարբերությունները» վերնագիրը:

Հայոց ցեղասպանությունը և հույների կոտորածները, ինչպես իրենց նախասպանությունը, այնպես էլ ընթացքով և հետևանքներով, ունենալով զգալի տարբերություններ, միևնույն ժամանակ բավականին մասն են իրար: Հաճախ նմանությունն այնքան մեծ է եղել, որ դրանք մույնացվել են և համարվել մեկ ոճիր կամ դրա տարբեր փուլեր: Այս առումով ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաունը նշում է, որ հայերը Թուրքիայի միակ հպատակ ժողովուրդը չէին, որ ենթարկվեցին չարչարանքների, Թուրքիան միայն թուրքերի երկիր դարձնելու քաղաքականության հետևանքով և հետո ավելացնում, որ հայերի մասին իր պատմությունը մի քանի փոփոխություններով, կարող է պատմել նաև հույների և ասորիների մասին<sup>90</sup>: Ուստի հույների տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրումը՝ առանց հայկականի հետ զուգահեռներ տանելու, անշուշտ թերի կլինի:

Ամենագլխավոր ու էական տարբերությունը Հունաստանի՝ որպես հույն ժողովրդի պետության առկայությունն է, ինչը չունեին հայերը և դա որոշակիորեն ազդեց օսմանահպատակ հույների հանդեպ թուրքական պետության վերաբերմունքի վրա<sup>91</sup>: Այս հանգամանքով են պայմանավորված առկա տարբերությունների մեծ մասը :

Հայերի և հույների նկատմամբ տարված ցեղասպանական քաղաքականությունը կիրառված մեխանիզմների, գործադրված միջոցների առումով գրեթե նույնն է, սակայն կան մի շարք ակնառու և կարևոր տարբերություններ: Հիմնական տարբերությունը, որով բացատրվում է, թե ինչպես հակաքրիստոնյա քաղաքականությունը հայերի դեպքում վերածվեց ցեղասպանության, իսկ հույների պարագայում սահմանափակվեց զանգվածային տեղահանություններով և կոտորածներով, այն է, որ հայերի դեպքում գոյություն ունեւ հստակ մշակված ցեղասպանության ծրագիր<sup>92</sup>, իսկ

---

<sup>89</sup> Crossing the Aegean, an appraisal of the 1923 compulsory population exchange between Greece and Turkey, /Edited by Renée Hirschon/, New York–Oxford: Berghahn Books, 2006, p. 14.

<sup>90</sup> Morgenthau H., Ambassador Morgenthau's Story. Garden City-New York: Doubleday, Page and Co., 1918, p. 323.

<sup>91</sup> Հունական պետության զսպող դերի մասին տես՝ Morgenthau H., Ambassador Morgenthau's..., p. 325-326.

<sup>92</sup> Տես՝ Մաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Եր.: «Լուսակն» հրատ., 2009, էջ 167-189:

հույների դեպքում գոնե մեզ ծանոթ գրականության մեջ այդպիսի ծրագրի գոյությունը բացակայում է<sup>93</sup>: Դրա հետ միաժամանակ կա տարբերություն գոեերի՝ մարդկային կորուստների թվաքանակի հետ կապված: Հայ ժողովրդի մարդկային կորուստները գերազանցում են հույների կորուստները, սակայն դրանից հույն ժողովրդի ողբերգությունն ամենևին էլ չի փոքրանում:

Հույների դեպքում բացակայում են համակենտրոնացման այնպիսի խոշորագույն կենտրոններ, ինչպիսիք են հայերի համար Տեր-Չորը և Ռ-աս-ուլ-Այնը: Հույն ցեղասպանագետ Թ. Մալկիդիսը, վկայակոչելով Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Պ. Էնեպելիդիին, համեմատում է Հույների ցեղասպանությունը հրեական Հոլոքոստի հետ և նշելով երկու ցեղասպանությունների մասնությունները, միաժամանակ ընդգծում է, որ չնայած հույներին տեղահանում էին, սակայն նրանք հիմնականում մահաճում էին ճանապարհին սովից, հոգնածությունից և հիվանդություններից, քանի որ նրանց համար վերջնական «կանգառ» չկար, գոյություն չունեին «հունական Աուշվից»: Դրա փոխարեն հույների տեղահանությունը նա համարում էր «Աուշվից ճանապարհին»<sup>94</sup>:

Չնայած երկու ժողովուրդների կոտորածները հիմնականում իրագործվեցին Առաջին համաշխարհային և 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին, այնուամենայնիվ, կան որոշակի տարբերություններ: Հույների արտաքսումներ և ջարդեր տեղի ունեցան մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, շարունակվեցին պատերազմի ամբողջ ընթացքում և զազաթնակետին հասան քեմալականների օրոք: Հենց ժամանակագրական որոշակի «տարբերությունը» բացահայտում է երկու ժողովուրդների կոտորածների օրգանական կապը: Այսպես, Հ. Մորգենթաուն, վկայակոչելով Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նախորդող և հաջորդող երեք-չորս ամիսներին հույների բռնագաղթի նկատմամբ միջազգային հանրության անտարբեր վերաբերմունքը, նշում է, որ հենց դրա պատճառով է, որ թուրքերը որոշեցին նույն մեթոդը լայն չափով կիրառել ոչ միայն հույների, այլ նաև հայերի, սիրիացիների, նեստորականների և իրենց հպատակ ուրիշ ժողովուրդների նկատմամբ<sup>95</sup>:

Եզրակացությունում ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները.

1. Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կայսրությունում հույների թվաքանակը կազմում էր շուրջ 2.5 միլիոն մարդ:
2. Բալկանյան պատերազմների վերջին շրջանում սկսվեցին հույների առաջին խոշոր տեղահանությունները և մասնակի ջարդերը: Այդ քաղաքականությունն առավել մեծ չափերով դրսևորվեց 1914 թ. գարնանը և ամռան սկզբին Փոքր

<sup>93</sup> Նիկոլայ Հովհաննիսյանը, վկայակոչելով բազմաթիվ արաբ հեղինակների, ևս մեկ անգամ ապացուցում է Հայոց ցեղասպանության ծրագրված լինելու հանգամանքը: Տես՝ Hovhannisyan N., The Armenian Genocide, Armenocide – The Most Genocidal Genocide, In Ten Languages of the World, Yerevan: «Zangak-97», 2009, p. 390 – 391.

<sup>94</sup> Μαλκιδής Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Εκδόσεις Αιγαίον, Λευκωσία, 2010, σελ. 197-198.

<sup>95</sup> Morgenthau H., Ambassador Morgenthau's..., p. 323-324.

Ասիայի Էգեյան ծովափի հունական բնակավայրերում և Արևելյան Թրակիայում: Երիտթուրքերը նպատակ ունեին «ազատեք» նշված շրջանները հույները՝ երկյուղելով, որ վերահաս Առաջին աշխարհամարտի ժամանակ դրանք կարող են կորցնել:

3. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայոց ցեղասպանությանը զուգահեռ իրականացվեցին հույների զանգվածային տեղահանություններ և կոտորածներ ինչպես Արևելյան Թրակիայում, այնպես էլ ամբողջ Փոքր Ասիայում: Իրականացման մեխանիզմների առումով այն բավական ընդհանրություններ ունեցավ Հայոց Մեծ Եղեռնի հետ:

4. 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին նոր ուժ ստացավ հակահունական արշավը: Չնայած հունական ինքնապաշտպանական խմբերի գոյությանը՝ Պոնտոսի գրեթե ողջ հույն բնակչությունը տեղահանվեց և կոտորվեց: Հարձակվող թուրքական բանակը 1922 թ. սեպտեմբերին գրավեց Փոքր Ասիայում հունական խոշորագույն քաղաք Չմյուռնիան և հրդեհելով քաղաքը, կոտորեց նվազագույնը 100-120 հազար հույն և հայ:

5. 1923 թ. հունվարի 30-ին ստորագրված «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը», փաստորեն, «իրավական» տեսք տվեց Թուրքիայից շուրջ 1.5 միլիոն հույների արտաքսմանը՝ մոռացության մատնելով նաև հարյուր հազարավորների անխնա սպանողը: Հունական կողմը միայն կարողացավ հասնել այն բանին, որ Տիեզերական պատրիարքը մնա Կոստանդնուպոլսում, իսկ քաղաքի հույն բնակչությունը չներառվի պայմանագրով փոխանակվող բնակչության մեջ:

6. Համադրելով Կոստանդնուպոլսի հունական տիեզերական պատրիարքարանի, դեպքերի ժամանակակիցների, թուրք և թուրքամետ հեղինակների, ինչպես նաև ժամանակակից ցեղասպանագիտության տվյալները, ակնհայտ է դառնում, որ 1914-1923 թթ. Արևելյան Թրակիայում, Պոնտոսում և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում երիտթուրքերի և քեմալականների հակաքրիստոնեական քաղաքականության հետևանքով միայն զոհվածների թիվը կազմում է նվազագույնը 500 հազար հույն:

7. Արևելյան Թրակիայում, Պոնտոսում և Փոքր Ասիայի արևմտյան հատվածում հույների նկատմամբ կիրառված գործողությունները միևնույն՝ հակահունական քաղաքականության մասն են կազմում:

8. 20-րդ դարի առաջին քառորդին Օսմանյան լծի տակ գտնվող հայերի և հույների միջև տեղի են ունեցել երկու գործակցության լուրջ փորձեր:

9. Չնայած թվային տվյալների հակասությանը, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Արևելյան Թրակիայում, Փոքր Ասիայում, ինչպես նաև Պոնտոսում կոտորվել են հարյուր հազարավոր հույներ, իսկ 1.5 միլիոն էլ բռնազաղթվել է Թուրքիայից: Այդ քաղաքականությունն այսօր մի շարք միջազգային կազմակերպությունների և հեղինակավոր ցեղասպանագետների կողմից որակվում է որպես ցեղասպանություն:

Ատենախոսության առանձին հարցեր և հիմնադրույթներ ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ատրիների և հույների խոցելիության ձևավորումը նրանց ցեղասպանությունների պատմական նախադրյալների դիտարկման տեսանկյունից, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, Եր.: Մանկավարժ, 2010 թ., էջ 300-302:
2. Հույների ցեղասպանությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Մխիթար Գ-ոչ» գիտամեթոդական հանդես, թիվ 4, Եր., 2010 թ., էջ 37-41:
3. Լոզանի կոնֆերանսն ու «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը», «Մխիթար Գ-ոչ» գիտամեթոդական հանդես, թիվ 4, Եր., 2010 թ., էջ 42-47:



adaeia ec Ododee e oie-ofaeiey noai onny+. Ada-aneie noidia oaeinu ainoe-u oiai, +oi Anaeanee I adedado inoeny a Einoaeiiea, a ada-anea iaanaea aidaa ia auei aeep-aii a aiaiaid. Niinoaeey aaiua Anaeanei Einoaeiieuni I adedadoa, madaaieeia, oodaeeo e idi-odadeeo aaidia, a oaeaa madaaiiuo enoi-ieeia, noaiaeeony yniui oi, +oi n 1914-1923aa. A Ainoi-ii Odaee, a Iioa e a caaaiie +aee I aeie Aee adadaa e iaadaaeiie idioea odeneai iieeoe e eaaioodie e eai aeenia noae 500ou. adaeia.

I oaii ioiaeeou, +oi a iadaie +adaoe Oo aaea caiaoiu naauaiua iiooe miodae-anoa adiyi e adaeia I niaineie ei iadee. A +anoiiee a aiu Aaiioea adiyi iiaea daee miane noie adiyi, a iieaeia iillae nei aeiaadoai. Niodae-anoai aao iadifa inai idyeyeni n 1918-1920aa. a iadeia nouanoaiey I adae Danoaeeee Adiaiey. Iii auei i-aaeai a oiaa I adaeie iedie eiioadaiee (1919-1920), ia eioidie adiyineay e ada-aneay noidia ia oi +oi ia iaeae, a aaea iillae adoa adoa a aiidina idanoaeiey maoaaiuo eioadana. Auee idaaieiyou iiooe miodae-anoa oaeaa iaeeo ada-aneie iediiieeoi Odaiecia e I daeaeuoi Danoaeeee Adiaiey. A aiu Adaei-odadeie aieiu iiaea adiyiea idyau ndaeenu dyai n adaeie.

Aennadoaeiiaa daioa mione ec aaaaiey, odao aea (ainui e iadaadaoia), caep-aiiey, menea eniueciaaiuo enoi-ieeia e eodaodou.

A aaaaiee idanoaeai aeoaeeiinu oai u, iadee-anea cia-aea, oae e caa+e enneaaiiey e noaaiu ec+ai iioe.

I daay aaaa aennadoe - "I aeeoe idaeaeiey adaeia e eo iieaeia a I niaineie ei iadee a eiioa 19-ai ia-aea 20-ai aea" idanoaeeyo aeaeaoou, aa idaeaeie ada-anea iaanaea e ia-aeo I adae iediae aieiu, idi oaiia mionae ada-aneia iaanaeiey e inoaiiio iaanaeiep, a oaeaa iieeoe-anea e moeaeui-yeiie-anea iieaeia adaeia a I niaineie ei iadee a eiioa XIX a. ia-aea XX a. I oaeuii dannaioadi idaaia iieaeia ada-aneia iadii a 1908-1914aa.

Aoiday aaaa iaouaony "Ada-aneie iadoa a aiu I adae iediae e adaei-odadeie aieiu 1919-1922 aa. Iieeoe adiyi-ada-aneia miodae-anoa. A yote aaaa inauaiu iiooe adiyi-ada-aneia miodae-anoa a aiu I adae iediae aieiu e adaei-odadeie aieiu 1919-1922aa, iannay aaidoae e dacy adaeia a Ainoi-ii Odaee, ia caaaa I aeie Aee, a Iioa e adaeo iaeanyo I niaineie ei iadee. I daanoaeai oaeaa acaeiiioia e miodae-anoai adaeia e adiyi a iadaie +adaoe 20-ai aea.

Odaoy aaaa "Ada-aneie aiidina ia Eicaineie eiioadaiee. I auinu e dace-ey a oodaeeie iieeoea: dacy adaeia e Aaiioea adiyi" inayuaia iaooaeiey Ada-aneia aiidina ia Eicaineie eiioadaiee, iaenaiiio «Aiaiaid ia iaia iaanaeiey iaeeo Ododee e Adaeae». I daanoaeai oaeaa iauinu e dace-ey a oodaeeie iieeoea a aiidina Aaiioea adiyi e iannae aaiidooe e dacia ada-aneia iaanaeiey. A caep-aiiee iaiaaiu daceuoou enneaaiiey, aaii iniaia auaiiu aennadoe.

## GEVORG VARDANYAN

### THE GREEK POPULATION IN THE OTTOMAN EMPIRE AND THE GREEK MASSACRES FROM 1914 TO 1923

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World history” 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.00 on July 04, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

#### SUMMARY

This work presents and analyzes the mass deportations and massacres of the Greek people in Turkey from 1914 to 1923. At the beginning of the 19<sup>th</sup> century the national liberation movement of the Greek population of the Ottoman Empire ended with the independence of Greece in 1830. The reforms launched in the 19<sup>th</sup> century did not solve the question of equality of the Muslims and the Christian minorities of the Empire. In the second half of the 19<sup>th</sup> century the Greek people continued the national struggle predominantly in Crete: separate demonstrations were held in Thessaly, Epirus and other regions as well. However, they all were subjected to the authoritarian politics of pressure.

From the end of the Second Balkan War until the end of the World War I the Greek population of Eastern Thrace and Western Asia Minor were forcible deported and massacred by the Young Turk regime.

In terms of methods there were significant similarities between the massacres of the Greek population and the Armenian Genocide. The main developments started in the Black Sea region (Pontus) in April 1916. Hundreds of thousands of Greeks were deported till the end of the war. The men were forced to hard work in labour battalions and later killed, and then the lynching of the peaceful population followed. The Greeks' economy was largely damaged as well.

After the Mudros armistice the persecutions of the Greek population continued by the Turkish nationalistic groups formed in the territory of the Empire. The campaign against the Greeks was notably enlarged during the Greco-Turkish war from 1919 to 1922. Notwithstanding the existence of the Greek self defending groups, almost the whole Greek population of Pontus was deported and slaughtered. In September 1922 the Turkish army attacked and captured Smyrna -the largest Greek city of Asia Minor. The city was put to fire and 100 000 – 120 000 Greeks and Armenians were massacred. The rest of the Greek population was deported to Greece.

During the Lausanne Conference (November 1922 - July 1923) Greece that had already lost the Greco-Turkish war of 1919-1922 had to sign “The Convention between Greece and Turkey Concerning the Exchange of Greek and Turkish populations” which in fact “legalized” the deportation of almost 1.5 million

Greeks from Turkey and the extermination of hundreds of thousands people. Due to the efforts of the Greek delegation the Ecumenical Patriarchate and the Greek inhabitants of Constantinople were not included in the exchange.

Juxtaposing the records of the Greek Ecumenical Patriarchate of Constantinople, the testimonies of the eyewitnesses, the accounts of the Turkish and pro-Turkish authors, with the contemporary data of the Genocide Studies, it becomes obvious that from 1914 to 1923 in consequence of the anti Christian policy of the Young Turks and Kemalists in Eastern Thrace, Pontus and Asia Minor at least 500 000 Greeks were killed.

It should be stated that in the first quarter of the 20<sup>th</sup> century the Greeks and the Armenians took serious steps to cooperation. During the Armenian Genocide many Greeks saved hundreds of Armenians, and the latter assisted their co-believers as well. The collaboration between the two nations was especially strengthened in the years of the first Republic of Armenia (1918-1920). In particular, at the Paris Peace Conference (1919-1920) the Armenian and the Greek delegations while stating their claims supported each other. Moreover, some steps towards cooperation were taken by the Greek Archbishop of Trebizond and the Government of the Republic of Armenia. During the Greco-Turkish war a number of Armenians were fighting for the Greeks.

The research question and the objectives as well as the practical significance of the dissertation are presented in the introduction.

The first chapter titled “The Regions and the Status of the Greeks in the Ottoman Empire at the End of the 19<sup>th</sup> Century and at the Beginning of the 20<sup>th</sup> Century” presents the Greek population distribution in the Ottoman Empire on the eve of the World War I. There is a separate analysis on the legal status of the Greek people from 1908 to 1914.

The second chapter titled “The Greek People During the World War I and During the Greek-Turk War from 1919 to 1922: The First Steps of Cooperation Between the Armenians and the Greeks” studies the mass deportations and massacres of the Greek population during World War I and during the Greco-Turkish war of 1919-1922: the mass deportations and massacres of the Greek people in Eastern Thrace, Eastern Asia Minor, Pontus and in other regions. The illustration of the Greco-Armenian cooperation in the first quarter of the 20<sup>th</sup> century is presented in this chapter as well.

The third chapter named “The Greek Question at the Lausanne Conference. The similarities and differences of the Turkish policy towards the Armenian Genocide and the mass killings of the Greek People” examines the details of the Lausanne Conference concerning the Greek issue. The Young Turk’s genocidal policy implemented against the Armenians and the Greeks in terms of methods was almost the same, yet there are significant differences as well and these peculiarities are discussed in the last chapter of the dissertation.

The findings of the research are presented in the conclusion.